ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՄՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ »ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Համագործակցային մեթոդի ազդեցությունը աշակերտների առաջադիմության վրա

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ Վարդենիս

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հասմիկ Բեյբության

ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ՝ Լորետա Կոլոտյան

ԴՊՐՈՑ՝ Վարդենիսի Հ.Համբարձումյանի անվան ավագ դպրոց

2022թ.

ՎԱՐԴԵՆԻՍ

Բովանդակություն

Ներածություն_____3

Գրական ակնարկ_____5

Փորձարարական հետազոտություն_____7

Խմբի նկարագիր_____7

Հետազոտության ընթացք_____8

Փորձարարական դաս 1_____10

Փորձարարական դաս 2_____12

Տվյալների մշակում և վերլուծություն_____14

Եզրակացություն_____16

Օգրագործված գրականության ցանկ_____17

Հավելված

Դասապլան 1

Դասապլան 2

Ներածություն

Արդեն մի քանի հարյուրամյակների պատմություն ունի ուսուցման կազմակերպման, այսպես կոչված խմբային եղանակը, որն իր պատմական զարգացման ընթացքում կայացել ու ամրապնդվել է երկու հիմնական տարատեսակներով՝ դաս-դասարանային և դասախոսություն-սեմինարային: Սակայն այս եղանակին բնորոշ են մի շարք էական սահմանափակումներ, որոնցից հատկապես նշմարելի է ուսուցման գործընթացում ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի գործուն ընդգրկվածության ապահովման խնդիրը: Այս խնդրի հաղթահարման փորձերը բազմաթիվ մեթոդական մշակումների և մանկավարժական նորարարությունների առիթ են հանդիսացել: Մանկավարժական պրակտիկայի մեթոդական բազմազանությունը, մանկավարժական տեսության հայեցակարգային ու տերմինաբանական գերհագեցվածությունը ստեղծում են մասնագիտական կողմնորոշման բավականին լուրջ դժվարություններ:

Ուսուցման կազմակերպման խմբային եղանակի հիմքում ընկած են ուսումնական պարապմունքներ, որոնք կազմակերպվում են հաղորդակցման բոլոր ձևերի միջոցով՝ միջնորդավորված, հաստատուն կազմով զույգերով, խմբային և փոփոխական կազմով զույգերով:

Սակայն, ի տարբերություն, խմբայինի, կոլեկտիվ պարապմունքների ընթացքում գլխավորը փոփոխական կազմով զույգային հաղորդակցման ձևն է: Մյուսները օգտագործվում են որպես լրացուցիչ օժանդակ ձևեր:

Խմբային ուսուցման ստեղծման գործընթացը բավականին բարդ ու երկարատև է: Դրանք ներկայացված են բազմաթիվ նորարար, ստեղծագործող մանկավարժների ու մանկավարժական խմբավորումների կողմից, որոնք ձգտելով կատարելագործել ուսուցման կազմակերպումը, հաղթահարել են կրթության ոլորտում առաջացած դժվարությունները, ինքնաբերաբար վերանայում են խմբային եղանակի սկզբունքները և իրագործում խմբային եղանակին բնորոշ մոտեցումներ:

Հետազոտության նպատակն է հանդիսանում խմբային ուսուցման տեխնոլոգիաների ու մեթոդների ներկայացումով ազդել ուսումնառության արդյունավետության բարձրացման վրա։

Գրական ակնարկ

Խմբային ուսուցման տեխնոլոգիայի հիմքում խմբերով աշխատանքն է: Ուսուցումն իրականացվում է փոփոխվող զույգերով, երբ ամեն մի աշակերտ սովորեցնում է մյուսին: Ուսուցման այս եղանակը նպատակային է իրականացնել և՛ գործնական աշխատանքների, և՛ ամփոփիչ ընդհանրացնող դասերի ժամանակ, քանի որ սովորողները հնարավորություն ունեն ավելի ազատ ու հետաքրքիր շփվել միմյանց հետ, առաջանում է փոխօգնության ցանկություն և նյութը համեմատաբար լավ է յուրացվում: Արդյունքում ձևավորվում է կոլեկտիվ մթնոլորտ, երկխոսական և հաղորդակցական կարողություններ:

Խմբային ուսուցման տարրերը ըստ Ջոնսոնների հինգն են՝

1. Դրական փոխկախվածություն: Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջակցելու մթնոլորտ: Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն, որը նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորումը:
2. Դեմ առ դեմ, խթանող փոխազդեցություն: Ընդհանուր նպատակին հասնելու համար խմբի անդամները համագործակցում են, փոխանակում են կարծիքներ և տեղեկություն, իրար աջակցում են:
3. Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն: Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար:
4. Սոցիալական հմտություններ: Խմբի անդամների միջև ձևավորվում է վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտ, խոսողին հետևել, աշխատանքը կատարելիս ներդրում ունենալ:
5. Խմբային գործընթաց: Խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների, խնդիրների քննարկման փուլ է:

Հետագայում Պասի Սալբերգի կողմից՝ ավելացվեց ինտերակտիվ առաջադրանքը, որպես կոլեկտիվացման 6-րդ տարր։ Նրա կարևոր չափանիշը այն է, որ խմբի անդամները հեշտությամբ մասնակցեն առաջադրանքի կատարմանը։

Վիխմանը կոլեկտիվ ուսուցման տեխնոլոգիայի հիմքում դնում է հետևյալ սկզբունքները՝

- Փոփոխվող զույգերի առկայություն
- Փոխուսուցում, փոխօգնություն
- Փոխադարձ ստուգում
- Փոխադարձ ղեկավարում

Իր ժամանակի Ա.Գ.Թիվինը մշակել է կոլեկտիվ ուսուցման տեխնոլոգիայի մի քանի մեթոդիկաններ, որոնք կիրառելի էին տարբեր իրավիճակներում։

- Ցանկացած ուսումնական առարկայից տեքստային նյութի ուսումնասիրում
- Տեքստերի փոխանակում
- Զույգերով վարժությունների կատարում
- Աշխատանք հարցաթերթիկներով հարցաշարերով

Կոլեկտիվ ուսուցման տեխնոլոգիայի դիդակտիկական հիմքը համագործակցությունն է։ Փորձը ցույց է տվել, որ կոլեկտիվ ուսուցումը այնպիսի ուսուցման գործընթաց է, որի ընթացքում սովորողները ոչ միայն խմբային աշխատանք են կատարում, այլև նրանցից յուրաքանչյուրը աշխատում է անհատապես։ Այսինքն այն հնարավորություն է տալիս ոչ միայն տարբերակված այլև անհատականացված ուսուցման։

Ուսուցման մի եղանակից մյուսին անցման պատմական օրինաչափության նկատվելը դեռ չի նշանակում հաջորդի՝ ուսուցման խմբի եղանակի անհետաձգելի ու անհապաղ կայացում։ Այդ եղանակը պետք է կառուցվի՝ հաղթահարելով օբյեկտիվորեն անհրաժեշտ անցման շրջանին հատուկ դժվարությունները և խնդիրները։

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Իմ դասավանդման գործընթացում նկատվում են բազմաթիվ խնդիրներ, որոնցից ուզում եմ առանձնացնել մի քանիսը: Դասարաններում մեծամասամբ բացակայում է՝

- Խմբային և կոլեկտիվ աշխատանքի ազդեցությունը աշակերտների առաջադիմության վրա
- Վերլուծական մտքի բացակայություն
- Ստեղծագործական մտքի բացակայություն
- մոտիվացիա

Խմբի նկարագիր

Հետազոտությունը իրականացրել եմ Վարդենիսի Հ.Համբարձումյանի անվան ավագ դպրոցի 10-րդ դասարանի բնագիտական հոսքում, որտեղ սովորում են 22 աշակերտ:Նրանցից 7-ը աղջիկներ են 15-ը՝ տղաներ:Ունեն բարձ մակարդակի գիտելիքներ 6 աշակերտ,միջին մակարդակի գիտելիքներ 10 աշակերտ,իսկ մյուսները համեմատաբար թույլ են սովորում:

Հետազոտության ընթացք

Դասարանի աշակերտների մեջ որոշակիորեն բացակայում է համագործակցային մտածողությունը, մեկը մյուսին օգնելու պատրաստակամությունը: Որոշեցի նախընտրած դասարանում կատարել հետազոտության բնական տիպը, որըընթանում է մանկավարժական բնականոն գործընթացի սահմաններում:

Տեսական վերլուծություն անցկացնելուց հետո ստացա դպրոցի տնօրենի թույլտվությունը:

Հետազոտության պլանի կազմում դիտարկելու եմ կախյալ փոփոխական գործոնը, որը փոփոխվում է կախված սովորողների գիտելիքներից, կարողություններից, հմտություններից, իսկ ուսուցիչը պետք է կարողանա այդ հմտությունները զարգացնել:

Առաջարկում եմ հիպոթեզ՝ համագործակցային մեթոդով ազդել աշակերտների առաջադիմության վրա:

Հետազոտական դիտարկումը կատարելու եմ երկու դասաժամերի ընթացքում՝ նույն դասարանում:

Որոշել եմ ընտրել տվյալների հավաքագրման ուղղակի (անմիջական) ձևը։
Հետազոտության ընթացքում կիրառելու եմ մի քանի մեթոդներ՝

- Դիտարկում
- Հարցում՝ զրույց, հարցազրույց
- Խմբային աշխատանք

Խմբային աշխատանքի մեթոդները հետևյալն են՝ երեք բանալի և մեկ կողպեք, մտագրոհ, աշխատանք զույգերով, բանավեճ։
Կազմում եմ դիագրամներ, աղյուսակներ և որոնցում պետք է ներկայացնեմ աշակերտի կամ դասարանի գրանցած նախնական արդյունքը և վերջնարդյունքը, իսկ դիտարկման վերջում պետք է համեմատեմ գրացված արդյունքները։
Նախավերջին փուլում կատարելու եմ եզրակացություն, որպեսզի հասկանամ, թե իմ առաջադրած վարկածը որքանով իրականություն դարձավ և գրանցելու եմ աշակերտների հաջողությունները։

Փորձարարական դաս 1

Հայոց պատմություն առարկայից նոր դասը հետևյալն է «Նոր հարստության հիմնումը։ Արտաշես I»։

Նախորոք հանձնարարվել էր Արտաշես Ա-ի վերաբերյալ հավաքել տվյալներ համացանցից։ Աշակերտների մեծամասնությունը կատարել էր հանձնարարությունը՝ մի մասը վիպերգին էր ծանոթացել, մի մասը Արտաշատ մայրաքաղաքն էր մատնանշում, մյուս մասն էլ ծանոթացել էր նրա կատարած միավորիչ գործունեությանը։

Դասը սկսեցինք մտագրոհով։ Երեխաները իրենց իմացած նախնական գիտելիքները գրեցին գրատախտակին։ Նրանցից յուրաքանչյուրը գիտակցում էր, որ ինչ-որ բանի հասնելու համար պետք է առաջընթաց ապահովել։ Այնուհետև ուսուցիչը սահիկաշարով ցույց է տալիս Մեծ Հայքի այն տարածքները, որոնք միավորվել էին Արտաշես Ա-ի միավորիչ գործունեության հետևանքով։

Դասի երկրորդ փուլում աշակերտները՝ ուսուցչի հարցադրումներին պատասխանելով, նշեցին այն բարեփոխումները, որոնք կատարվել էին Արտաշես Ա-ի օրոք։ Դրանք են՝ հողային, կրոնական, ռազմա-վարչական, քաղաքաշինական։ Դասարանը բաժանվեց 4 խմբի։ Հնարավորինս հավասար բաժանում տեղի ունեցավ՝ ըստ մակարդակների(խմբում հավասարապես ընդգրկվեցին բոլոր երեք մակարդակ ունեցող աշակերտները)։ Մի տեսակ ոչ շահագրգիռ վիճակ էր տիրում։ Խմբերում աշխատում էին միայն բարձր բարձր գիտելիք ունեցող աշակերտները։ Միայն վերջին խումբը, որ պիտի ներկայացներ քաղաքաշինություն բնագավառը, ակտիվ քննարկումներ էր անում, երբեմն բարձր ձայնով մեկը մյուսին բացատրում էր, թե ինչու՞, ե՞րբ։ Եվ այսպես 10րոպե։ 10րոպե անց խմբերը սկսեցին ներկայացնել իրենց կատարած աշխատանքները։ Ներկայացնում էին Գ մակարդակի աշակերտները։ Իսկ երբ հարցեր տրվեցին խմբի մյուս անդամներին, շատ քիչ պատասխաններ հնչեցին։ Միայն վերջին խումբը ներկայացնողը Բ մակարդակի աշակերտ էր, որը ջանք չխնայելով, անգամ ընթացքում իր խմբի մյուսանդամներին հարցադրումներ անելով, կարողացավ ներկայացնել դասը։

Ավարտելուց հետո տեղի ունեցավ գնահատում՝ շեշտը դրվեց վերջին խմբի աշակերտների վրա։ Գրեթե բոլորը գնահատվեցին՝ իրենց տված պատասխաններից ելնելով։

Եվ որ արդյունավետ է, թիմի բոլոր անդամները իմացան, թե որտեղ է կառուցվել Արտաշատը, երբ, ով է օգնել Արտաշես Ա-ին քաղաքը կառուցելիս, և որ այն ինչու կոչվել է «Հայկական Կարթագեն»։ Ճիշտ է, մյուս խմբերը մի փոքր անբարյացկամ ընդունեցին իրենց ցածր միավորները (իմիջիայլոց ցածր գնահատվեցին բոլոր խմբերը բացի վերջինից), բայց հուսով եմ հասկացան, թե ինչի համար (որովհետև խմբից մեկ կամ երկու հոգի թեման կարողացան ներկայացնել)։

Այս պարագայում աշակերտների խմբային առաջադիմության մեթոդը շոշափելի արդյունք չտվեց։

Երկրորդ փուլ- Վերջին 10րոպեն հատկացրեցինք պատմիչների թողած տեղեկություններին՝ Արտաշես Ա-ի վերաբերյալ (Պոլիբիոսի, Ստրաբոնի, Պլուտարքոսի և այլոց)։

Երրորդ փուլ- Այս փուլում ամբողջացրին և ամփոփեցին դասի հիմնական գաղափարները՝ Արտաշես արքան իր սերունդներին թողեց տնտեսապես հարուստ, բարգավաճ և ռազմական առումով հզոր երկիր, խաղ-քարտերի հարցերով ստուգեցին նոր ձեռք բերված գիտելիքները, որից հետո ձևավորող գնահատում տեղի ունեցավ։

Հանձնարարվում է համացանցից հատվածներ գրառել Արտաշես արքային նվիրված վիպական զրույցներից։

Փորձարարական դաս 2

Նոր դասի թեման է՝ Հայաստանը աշխարհակալ տերություն։ Տիգրան երկրորդ Մեծ։ Նախքան նոր նյութին անցնելը տարբերակված հարցադրումների միջոցով ամփոփվեց անցած նյութը։ Վերլուծություն չպահանջող հարցեր ուղղվեցին աշակերտներին։ Պատասխանները լսելուց հետո դիմում էի դասարանին՝ արդյոք ճի՞շտ է, ինչու, վեր հանելով և շտկելով թյուրըմբռնումները:Նախորդ դասի վերաբերյալ գրատախտակին գրեցի մի քանի կարևոր թվականներ, որոնք աշակերտները արագորեն լրացրեցին։

Դասի սկիզբ- Դասարանը մոտիվացնելու համար նախ սահիկաշարով ցույց տվեցի նախորոք պատրաստված նյութերը՝ Տիգրան Մեծի դիմանկարը, նրա հատուկ ոսկեդրամները, տարածքային գրավումները, որոնք ձգվում էին «ծովից ծով»։ Դա մի տեսակ հպարտության զգացում առաջացրեց աշակերտների մոտ։ Չէ՞ որ բոլոր ժամանակներում չէ, որ հայերը ունեցել են նման երկիր։ Եվ դրա հիման վրա նրանց մեջ առաջացան բավականին շատ հարցեր, որոնց փորձեցի պատասխանել սեղմ։

Երկրորդ փուլ- Նոր նյութը բավականին ծավալուն է, դրա համար օգտագործեցի երեք բանալի և մեկ կողպեք մեթոդը։ Այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձևավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, ինչպես նաև համագործակցելու և իր ընտրությունը հիմնավորելու կարողություն։

Աշխատանքը կատարվեց զույգերով։ Յուրաքանչյուր զույգ իր աշխատանքային տետրում գրեց դասի հիմնակմախքը ներկայացնող երեք բառ և մեկ նախադասություն։ Գրելուց հետո զույգերը փոխվեցին և այդ բառերին ավելացան մյուս աշակերտների մտքերը (միայն թե չկրկնվող)։

Մոտ 15րոպե տևող աշխատանքը ավարտվեց և զույգերից մեկը ներկայացրեց արդեն ամբողջ դասարանի կողմից մշակված դասի բովանդակությունը։ Ի տարբերություն նախորդ դասի այս անգամ աշակերտների վերաբերմունքի մեջ մտերմություն կար։ Ջանում էին մեկը մյուսին լրացնել, որ պատասխանը լիարժեք լինի։ Այս փուլում գրեթե բոլորը գնահատվեցին՝ իմիջիայլոց որոշ աշակերտների մի փոքր բարձր գնահատեցի, քանի որ տեսնում էի, որ նրանք ջանացել էին։

Վեր հանեցին Տիգրան Մեծի պատմական կերպարը ազատ շարադրանքի մեթոդով՝ շեշտը դնելով այն փաստի վրա, որ Տիգրան Մեծը աշխարհակալ արքա էր, ու իրեն էր ենթարկեցնում այնպիսի հզոր երկրների, ինչպիսիք են՝ Սելևկյան պետությունը և Պարթևստանը, և որ նրա երկրում խոսում էին 15-ից ավել լեզուներով: Հիմնավորեցին, թե ինչու կառուցեց նոր մայրաքաղաք:

Աղյուսակով ցույց տվեցին տերության 3 կարգի հատվածները՝

	Երկրներ	Տարածքը թվերով
1 բուն հայկական		
2 հպատակ թագավորություններ		
3 քաղաքական ազդեցության ոլորտում գտնվող		

Աշակերտների ոգևորությունը մեծ էր: Կարծես իրենք էլ էին մասնակցություն ունեցել այդ տարածքների գրավմանը և ես բռնեցի այդ թելը ու խորին համոզմամբ պնդեցի, որ ոչ միայն արտաքին գործոնը և ճկուն դիվանագիտությունը օգնեց հասնելու տարածքային այդպիսի նվաճումների, այլև ներքին համախմբվածությունն ու միավորումը:
Զգում էի, որ ինչ-որ բան աշակերտների մեջ շարժվում է: Նրանք անգամ զուգահեռներ անցկացրին այսօրվա իրականության հետ և բանը հասավ նրան, որ աշակերտների միջև տեղի ունեցավ բանավեճ: Մի մասը պնդում էր, որ արտաքին գործոնն է կարևոր, մյուս մասն էլ հակված էր ներքին միավորմանն ու համախմբմանը:
Երկրորդ փուլի վերջին 10 րոպեների ընթացքում հանձնարարվեց հայտորոշիչ թեստ: Իմ սպասելիքները որոշակի արդյունք տվեցին:

Տվյալների մշակում և վերլուծություն

N	Առաջադիմություն	Մտածողություն	Ակտիվություն
1	8	75%	80%
2	9	70%	80%
3	3	25%	30%
4	4	30%	25%
5	8	85%	85%
6	9	90%	90%
7	3	30%	60%
8	7	60%	80%
9	6	50%	60%
10	8	80%	80%
11	4	25%	40%
12	7	80%	80%
13	7	70%	70%
14	4	20%	40%
15	7	70%	80%
16	4	20%	30%
17	6	70%	80%
18	6	70%	80%
19	8	80%	80%
20	9	90%	90%
21	3	25%	30%
22	4	40%	25%

Այս թեստի արդյունքով ուսման որակը դարձավ 50%, նախկին 39%-ի փոխարեն, իսկ առաջադիմությունը նախկին 78%-ի փոխարեն դարձավ 85%։

Առաջադիմության և որակի դիագրամա՝ 2 գրավոր առաջադրանքների արդյունքների հիման վրա։



Եզրակացություն

Այս հետազոտության ընթացքում ես համոզվեցի՝

1. Տարբերակված ուսուցման ժամանակ ուսուցչի ճիշտ կազմակերպված առաջադրանքը խրախուսում է սովորողին, օգնում գտնել միջոցներ՝ արդյունքի հասնելու համար։
2. Եթե յուրաքանչյուր սովորող ունի իր առանձնահատկությունները՝ հաշվի առնված տարբերակված առաջադրանք, ապա սովորողը խմբի մեջ չի վախենա սխալվելուց, չի վախենա խմբի անդամից օգնություն խնդրելուց։
3. Սովորողը չի վախենում դատողություններ անել հասակակիցների փաստարկներից ելնելով, սովորողը խմբային աշխատանքի ժամանակ ավելի համարձակ է արտահայտում իր մտքերը։
4. Խմբի յուրաքանչյուր անդամ ավելի պատասխանատու է դառնում մյուսների համար, փորձում օգնել ընկերոջը՝ ընկալելիս նյութը և նկատելով, թե որն է ընկերոջ մոտ ավելի լավ ստացվում, գնահատում նրան։
5. Սովորողների ուշադրությունը ավելի սևեռվում է, քանի որ բոլորը ունեն համապատասխան աշխատանք և ուժեղներն էլ չեն ձանձրանում, քանի որ միշտ ունեն մտածելու խնդիր և միշտ զբաղված են։
6. Զնավորվում է սովորողի ինքնավերահսկումը, քննադատական մտածողությունը, որն էլ բերում է նրանց ունակությունների բարձրացմանը։
7. Տարբերակված ուսուցման միջոցով հնարավոր է ապահովել սովորողի առաջընթացը։

Սակայն որքան էլ այս փաստարկներից եզրահանգումներ կատարենք և նկատենք նրանց առաջընթացը, կարծում եմ, կախված տարբեր հանգամանքներից, թեմայի և միջավայրի առանձնահատկություններից, հնարավոր է արդյունավետության տարբեր ցուցանիշներ ունենալ։

Օգտագործված գրականության ցանկ

1. Ադամյան Ն., Դասավանդման մեթոդիկայ արդի տեխնոլոգիաներ, Ուսումնամեթոդական ձեռնարկ, «Էդիթ Պրինտ», Երևան2018
2. Արևաուդյան Ա.,Օհանովա Ի., Գրիգորյան Ք., Դավթյան Մ., Զոհրաբյան Ա., Հովհաննիսյան Գ., Սեմինար պարապմունքների ուղեցույց, Ձեռնարկ ուսումնական ծրագրեր մշակող մասնագետների համար,ԱՌԵՔՍ, Երևան,2002
3. Մկրտչյան Մ.Ա., Կոլեկտիվ ուսուցման տարրերը։ Մեթոդական ձեռնարկ ուսուցչի համար, Երևան2009
4. Вихман М., Коллективный способ обучение. М. 2009
5. Гарисимов, М. В. Внутрифирменное обучение теоретический аспект /Текст/ /М. В. Герасимов// Молодой ученый ,-2016. -N5
6. Мкртчян М. Вопросы становления коллективного спо-со-ба обучения. –ж Русский язык в Армении , N1, Ереван, 2000
7. Паси Сальберг, Финские уроки, М. 2007
8. Снопков В. Т. Уроки и проблемы. – Коллективный способ обучения, N2, Красноярск,1995

Դասապլան 1
Ուսուցչուհի՝ Լորետա Կոլոտյան

Առարկա՝	Հայոց պատմություն	Ամսաթիվ	18.03.2022թ.	Կիսամյակ	2	Դասարան	10-րդ
Խմբի Կառուցվածքը	Դասարանում սովորում են 22 աշակերտ: Նրանցից 7-ը աղջիկներ են 15-ը՝ տղաներ						
Թեմա՝	Արտաշես Ի-ի բարենորոգումները						
Օգտագործվող նյութեր	Գծակարգեր, աշխատանքային տետրեր,քարտեզ ,Հայաստանի պատմության ատլաս (Ա մաս),նկարներ (Արտաշես Ի-ի, Հաննիբալի, Արտաշատի, սահմանաքարերի, Անահիտ դիցուհու և այլն), արխիվային փաստաթղթեր (Մ.Խորենացի), կպչուն գունավոր թղթեր:						
Դասի նպատակը՝	Աշակերտը կսովորի՝ 1. Ի՞նչ տարածք ընդգրկեց Մեծ Հայքի պետությունը Արտաշես Ի-ի վերամիավորիչ գործունեության արդյունքում: 2. Ի՞նչ բարեփոխումներ իրականացրեց Արտաշես Ի-ը ,ինչու՞: 3. Ինչու՞ Արտաշես Ի-ը նոր մայրաքաղաքը կառուցեց Արարատյան դաշտում և ի՞նչ քայլեր ձեռնարկեց Արտաշատը բնակեցնելու համար: 4. Որքանո՞վ Արտաշես Ի-ի բարենորոգումները նպաստեցին Մեծ Հայքի զարգացմանը:						

Ուսուցման փաստեր,որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ

Վերջնարդյունքները	ա) Աշակերտները կիմանան՝ Արտաշես Ի-ի բարենորոգումները յունքներ (վարչական, ռազմական, , հողային, մշակութային և այլ): բ) Կգնահատեն՝ արքայի դերը Մեծ Հայքի հզորացման գործում: գ) Կարժևորեն ՝ օրենքի ,իրավունքի գերակայությունը , արդա - ությունը (մասնավոր և համայնքային հողերի բաժանումը): դ) Կձևավորվի՝ հոգևոր արժեքները գնահատելու կարո- ղունակություն , հարգանք նախնիների , մեծերի ,կրոնի նկատմամբ: ե) Կձևավորվի ՝ պատմական ,վերլուծական մտածողության հմտություններ ՝ ներկայացներով լավագույն առաջնորդի բարեվարքությունը (Արտաշես արքա Բարի , Բարեպաշտ):

Գործողություններ Ժամ/տևողություն	Դասի փուլերը	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Առանցքային հարցեր
5-10ր	Աշակերտները ողջունում են ուսուցչին և տեղավորում իրենց տեղերում, Հարցերի միջոցով անցածի կրկնություն	Ողջունում է աշակերտներին - Բացակա աշակերտներին է գրանցում Հարցերի ուղղում աշակերտներին	Աշակերտների ուշադրությունը կենտրոնացնում է դասին Հարցերի պատասխանում	Ո՞ր երկրներից հետ բերվեցին Մեծ Հայքի կորցրած տարացքները:
15-20ր	Ընթացք	Ուսուցիչը դասարանը մոտիվացնելու համար գրատախտակին գծում է գծագիր և կազմակերպում մտագրոհ, Արտաշես Ա-ի միավորիչ արշավանքները վերհիշելու համար։ : Աշակերտներն բաժանել 2 խմբի և տալ ցուցումներ հաջորդ հետազոտական դասի վերաբերյալ: Տալ յուրաքանչյուր խմբին	Աշակերտների մի մասը լրացնում են այն բոլոր տարածքների անունները ,որը միավորել էր արքան ,մյուսները ցույց են տալիս քարտեզի վրա : Գծագիրը լրացնելուց հետո , աշակերտները ներկայացնում են , թե Մեծ Հայքը ինչ դեր ունեցավ տարածաշրջանում: Աշակերտները կփորձեն ներկայացնել ,թե երկրի հետագա, շարունակական	Ի՞նչ նպատակ ուներ հողային բարեփոխումը: Ինչու՞ էր պետք նոր մայրաքաղաք և որտեղ այն կառուցվեց, ըստ Պլուտարքոս պատմիչի: Ո՞րն էր վարչական և ռազմական բարեփոխու

		հանձնարարություններ Ուղղում է հարցեր։ Ուսուցիչը հերթով ,գծագրերի , նկարների միջոցով ներկայացնում է Արտաշես արքայի բոլոր բարեփոխումները , Արտաշատ մայրաքաղաքի կառուցումը,կարդում հատվածներ պատմիչների բարենորոգումների մասին վկայություններից :	զարգացման համար ինչ էր անհրաժեշտ։ Աշակերտները կատարում են գրառումներ իրենց տետրերի մեջ՝կազմելով համակարգող գծապատկեր։	մների նպատակը։
7-10ր	Ավարտ	Ուսուցիչը, ամրապնդում ,ամբողջացնում է դասի հիմնական գաղափարները (Արտաշես արքան իր հաջորդներին թողեց տնտեսապես հարուստ ,բարգավաճ և ռազմական առումով հզոր երկիր) , խաղ քարտերի հարցերով փորձում է ստուգել նոր ձեռք բերված գիտելիքները,	Ուսուցչի ուկնդրում։ Ուսուցչի հարցերի պատասխանում։	

		որից հետո գնահատում ակտիվ աշակերտներին։		
Տնայինաշխատանք 3-5ր		Կարդալ , հատվածներ գրառել Արտաշես արքային նվիրված վիպական զրույցներից:		

Դասապլան 2

Ուսուցչուհի՝ Լորետա Կոլոտյան

Առարկա՝	Հայոց Պատմություն	Ամսաթիվ	20.03.2022թ.	Կիսամյակ	2	Դասարան	10-րդ
Խմբի Կառուցվածքը	Դասարանում սովորում են 22 աշակերտ: Նրանցից 7-ը աղջիկներ են 15-ը՝ տղաներ						
Թեմա՝	Հայաստանը աշխարհակալ տերություն; Տիգրան 2-րդ Մեծ						
Օգտագործվող նյութեր	Դասագիրք, ատլաս, քարտեզ, էլեկտրոնային գրատախտակ, նկարներ, փաստաթղթեր, կպչուն գունավոր թղթեր:						
Դասի նպատակը՝	Աշակերտը կսովորի՝ 1. Ի՞նչ տարածքներ նվաճեց Տիգրան Մեծը: 2.Ի՞նչ կտար Հայաստանին հայ-պոնտական դաշինքը: 3. Ի՞նչու Տիգրան Մեծը կառուցեց մայրաքաղաք Արտաշատի առկայության դեպքում: 4. Ո՞րն էր Տիգրան Մեծի առավելությունը Սելևկյան գահի մյուս թեկնածուների նկատմամբ: 5. Ո՞րքան տարածք էր զբաղեցնում << Ծովից-Ծով>> Հայաստանը:						

Ուսուցման փաստեր,որոնք կվկայեն, որ ուսուցումը տեղի ունեցավ

Վերջնարդյունքները	ա) Աշակերտները կիմանան Տիգրան Մեծի կատարած նվաճումների մասին: բ) Կգնահատեն արքայի դերը Մեծ Հայքի հզորացման գործում: գ) Կարժևորեն այն փաստը, որ հայոց արքան կարողացավ դուրս գալ և ամրապնդվել Միջերկրական ծովի արևելյան ափերին, որը զարգացման լայն հեռանկար էր բացում Մեծ Հայքի համար: դ) Կձևավորվի հարգանք հզորի, ուժեղի նկատմամբ (Ծովից-ծով Հայաստան)

Գործողություններ Ժամ/տևողություն	Դասի փուլերը	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Առանցքային հարցեր Ո՞ր տարացքները միավրեց տիգրան մեծը,շարունակելով

				Արտաշեսին:
5-10ր	Աշակերտները ողջունում են ուսուցչին և տեղավորում իրենց տեղերում, Հարցերի միջոցով անցածի կրկնություն	Ողջունում է աշակերտներին - Բացակա աշակերտներին է գրանցում Հարցերի ուղղում աշակերտներին	Աշակերտների ուշադրությունը կենտրոնացնում է դասին Հարցերի պատասխանում	Ի՞նչ նպատակ ունեին հայ-պոնտական (Ք.ա. 94) և պարթևակ ան(Ք.ա. 87) Դաշինքներ ը:
15-20ր	Ընթացք	Դասարանը մոտիվացնելու համար ուսուցիչը գրատախտակին գծում է գծագիր և կազմակերպում մտագրոհ: Ուսուցիչը հերթով ներկայացնում է այն բոլոր նվաճումները, որոնք իրականացրել էր Տիգրան Մեծը, տարածքային գրավումները, ներկայացնում է թե որն է Տիգրան Մեծի հաջողության գրավականը, ով կարողացավ	Աշակերտների մի մասը ասում էր գծագրում այն բոլոր տարածքների անունները, որոնք գրավել էր Տիգրան Մեծը, իսկ մյուս մասը դրանք ցույց է տալիս քարտեզի վրա: Ցույց տվեցին Տիգրանակերտ մայրաքաղաքի ավերակները: Տիգրան Մեծի դիմանկարով հատած ոսկեդրամները:	Ի՞նչ կարգի հատվածնե րից էր բաղկացած Տիգրան Մեծի տերություն ը և ինչքա՞ն էր ընդհանուր տարացքը: Երկար կյանք ո՞ւնենում են նման պետություն ները:

7-10ր	Ավարտ	ստեղծել մի երկիր,որը ձգվում էր Կասպից ծովից միջև Միջերկրական ծով: Կատարում է դասի ամփոփում: Գնահատում լավագույ պատասխանողներին:	Ուսուցչի ուկնդրում: Հարցերի պատասխանում	
Տնայինաշխատանք 3-5ր		Հանձնարարվում է գծել ու լրացնել Տիգրան Մեծի տարածքային նվաճումները և պատասխանել հարցերին:		